

Վերադառնում են Բուդդա ու Դաո,  
Քո՞ ստովածն ուր է, անտերունչ լաո...

(«ՈԳԵԿՈՁ», Ա. Վ.)

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

2001 թվականի համար արդեն իսկ նախապատ-  
րաստվում է հայ քրիստոնեության 1700-ամյակի  
փառահեղ նշումը: Հակադարձորեն նույնքան մեծ  
պղծություն պիտի լիներ այս առիթով վերստին  
չհիշատակել արիահայ մեր մարգարե՝ նախ-  
նյաց, որոնք եղան ու մնում են հնդեվրոպական  
5000-ամյա փառահեղ քաղաքակրթության ար-  
համարհված ռահվիրաները: 2001 թվականը հի-  
րավի կլինի նշանակալից, սակայն բոլորովին  
այլ մեկ առումով և այլ ակնկալիքներով:

Այս մատյանն ԱՎԵՏ է գալիքի, կորուսյալ  
իմաստության վերահայտնությունն ու դրանով իսկ  
փառերգություն՝

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆՅԱՑ ԱՐԺԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ:

XIX Գ. «Կգա ժամանակ, երբ գիտությունները բնության և գիտությունը մարդու վերաբերյալ կմիաձուլվեն»:  
Կ. ՄԱՐՔՍ

I—III Գ. «Այս բաները առականերով խօսեցի ձեզ, բայց պիտի գալ ժամանակ, երբ այլևս առականերով չպիտի խօսիմ ձեզ հետ, այլ յայտնապէս Հօր մասին պիտի պատմեմ ձեզ»:  
ԱՎԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՀՈՎՀԱՆՆՈՒ

Մ. Թ. Ա. 1-ԻՆ ՀԶ «ՃԱՆԱԶԻՐ ԻՆՔԴՔԵԶ» և «Է՛Ի»  
(Հունական Գեկիիք տաճարի արձանագրություն)

Մ. Թ. Ա. 3-ՐԳ ՀԶ



(ՄԵԾԱՄՈՐ, աստղադիտական Փոքր Բլուր:)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՈՐԴԻ  
(ՎԱՐՊԵՏՅԱՆ)

# ԷՈՒԹՅՈՒՆ

ԱՍՏ

(Ամենայն Ստեղծի Տեսություն)



Ընդհանուր տպաքանակը՝ 1050:  
Սույն օրինակի համարանիշն է՝ Ռ  
վավերացված հեղինակի ստորագրությամբ:

 ԷՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1995

## ԵՐԿՈՒՆՔ



Սույն աշխատությունը ֆրանսահայ ճարտարապետ, բեմադրիչ, արևելագետ, գրող, հրապարակախոս և ազգա-մշակութային գործիչ Ա. Վարպետյանի երկտասնամյա պրպտումների արգասիքն է ու նրա հավատո հանգանակը: Դեռևս 1979 թ., երբ սփյուռքահայությունն ու հայրենիքն ապրում էին առօրեական կենցաղով, Ա. Վարպետյանը ֆրանսահայ «Armenia» ամսագրում հրապարակում է «ՀԱՐԱՏԵՎՈՒՄ» խոհական ակնարկը, որով ա-

հագանդում էր հայ ժողովրդի խնդրականը գալիք Ց-րդ հազարամյակում: Ինչպես այդ ակնարկից առաջ, հետագայում ևս Ա. Վարպետյանի բոլոր հրապարակախոսությունները հայ բազմապիսի մամուլում, դասախոսությունները սփյուռքի ամենատարբեր գաղութներում ու հայրենիքում, հայագիտական պրպտումները և հրատարակումները, ռադիո-հեռուստատեսային ելույթներն ու ընդհանրապես՝ ազգա-մշակութային իր ողջ գործունեությունը բևեռվելու էր հայ ազգի պատմական վերածննդյան և հարատևման հիմնահարցի շուրջ:

1978 թ. մարտեվահայ գաղութում բեմադրում է Պ. Սևա-

կի «Անլոնի Զանգակատուն» պոեմը՝ իր մեկնարանությամբ: 1980 թ. հիմնում «Արվեստանոց Սեակ» թատերախումբը, թատերագրում ու բեմադրում «Եվ Այր մի՛ Մե՛ՎԱԿ անուն» այլարանական ներկայացումը՝ հանդես գալով հայ և ֆրանսիական փառատոներում (ԺԱՖ—80 փառատոների մրցանակ): Ծարտարապետական մրցույթի դրամական պարգևը (1981 թ.) հնարավորություն է ստեղծում Ա. Վարպետյանին որոշ ժամանակ ամբողջությամբ նվիրվել իր երազանքի իրագործմանը: 1982 թ. գրում ու պատկերագրում է հայ ժողովրդի ամբողջական ճակատագրին նվիրված «ԱՐԵՎՈՐԴՅԱՆ ՊԱՐԸ» կինոսցենարը, սփյուռք-հայրենիք համագործակցությամբ այն նկարահանելու միտումով: Հանդիպելով նյութա-քաղաքական արգելքների՝ հեղինակն այն գրական վերամշակմամբ ու «ԱՐՓՈԱԿԱՆ» վերանվանմամբ 1985 թ. հրատարակում է Մարսելում Մեծ Եղևոնի 70-ամյակի առթիվ՝ հարկադրաբար գրավադրելով իր անձնական բնակարանը (գործն արժանանում է 1985—86 թթ. Հ.՝ Ուզունյան գրական առաջին մրցանակին): 1987 թ. Լոնդոնում, որպես անգլիահայ «Էրերունի» երկչարաթաթերթի խմբագիր, Ա. Վարպետյանը շարունակում է արձարձել լինելիության խնդրականը՝ թեև նրան շի հաջողվում զուգահեռաբար հիմնել «ԷՆԻՓՅՈՒՆ» ազգագիտական իր ծրագրած հանդեսը: 1988 թ. Մարսելում հեղինակում և հրատարակում է «Ո՛ՎՔԵՐ ԵՆ Ի ՎԵՐՋՈ ԱՐՄԱՅԻՆԵՐԸ» հայագիտական հետազոտությունն հայ ժողովրդի արիական ծագման վերաբերյալ: 1990 թ. այն վերահրատարակվում է հայրենիքում, բոթրոքելով հայոց արիական ինքնագիտակցության զարթոնքն ու հրահրելով նման այլ աշխատությունների լույս աշխարհ գալը (ոռուերեն թարգմանության հրատարակումը Մոսկվայում սպասվում է 1995 թ. զարնանը):

1990 թ. Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ վերջապես սկսվում են «ԱՐԵՎՈՐԴՅԱՆ ՊԱՐԸ» կինոնկարի նախապատրաստական աշխատանքները և ընդամենը 4 ամիս անց ընդհատվում՝ նորից քաղաքական ու տնտեսական նկատառումներով: Սակայն նույն թվին Ա. Վարպետյանը, զարգացնելով 80-ական թվականներին սփյուռքահայ նվիրյալ մտավորականներով և իր իսկ նա-